30. ԱՆԲԱԽՏ ԱԽՃԻԳՅԸ ԲԱԽՏԱՎԵՐՎՈՒՄ Ա

Ինում ա, չինում մին մարթ նան մին կնեգյ։ Տահանց ինում ա մին ախճիգյ։ Հաՙրը նան մարը շատ ըն սիրում ըխճըկանը։

Ասըմ ըն.— Մեր աշկին լուսը, մեր աշկին սըվըսիպտաՙկը, մեր տանը սունը էս ախճիգյն ա։

Մին դոՙնըմ մին բախտու եշող ա կյամ, տահանց շենը։ Օղում ըն ըխճըկանը բախտեն եշիլ տան։ Տանում ըն ընդրա կոշտը։

Բախտին եշում ա, ասում.— էտ ախճիգյը օխտը տարե մըեռալ ա լըղըցնական։

Հաՙրը նան մարը շատ ըն տխրվում։ Օղում ըն ուրաՙնց աշխարքան տուՙա օնին, վեր էտ մըեռալը լըղըցնե վեչ։ Հաՙրը նան ախճիգյը ճընապարվում ըն։ Շատ ըն քյնաՙմ, թաՙ խրեգյ ըն քյինաՙմ, տեսնում ըն մին մեծ դուՙզում մին պալատ կա։

Հաՙրն ասում ա.— Ախճիգյս, քյնաՙնք, տեսնանք հի՞նչ կա էտ պալատումը։

Քյնաՙմ ըն։

Հաՙրը սկսում ա տոՙռնը կուփե-կուփե անելը։ Պաՙցվում չի։

Ախճիգյն ասում ա.— Ա՛ հաՙր, թող յրես տեսնամ կարում ը՞մ պաՙնաՙմ։

Ախճիգյը կյամ ա տռանը կուփե տամ, տոՙռնը պաՙցվում ա։ Ախճիգյը նի յա մՙնըմ, թաՙ հաՙրն էլ հետան նի մՙնե, ամմա տոՙռնը էլհա նհետ ա ինում։ Հաՙրը մՙնամ ա տռանը։

Հաՙրը ըխճըկանը ասում ա.— Տես հի՞նչ կա էտ տներումը։

Ախճիգը նի յա մընում, տները շոռ կյամ, տեսնում ա մին տոն, լիքը վրեսկե, էն մինը՝ լիքը պրինձ, շաքյար, շատ պաներ մաչին։ Մին տոռնը էլ պանում ա, տեսնում մին մարթ մրեռած, տիրած ընդեղ։

Կյամ ա տռանը կոշտը, ասում.—Ա՛ հար, էն ա ընդեղ մին մրեռալ կա։

Հարը շատ ա լաց ինում, ամմա ախճիգն ասում ա. — Ա՛ հար, վեչինչ, հալբաթ ճկատես սհենց ա իլալ կյիրված։

Պուրում ա տեսա-տենա տամ հորը։ Հարը քյինամ ա։ Ախճիգը մնամ ա էտ տանը։ Ախճիգը էլհա սկսում ա տները շոռ կյալը։ Մաթ ա մընում, թա էս հի՞նչ իլաթ, միլլաթ ա, վար էսքան հարուստ ա իլալ։

Էս ախճիգը ամմեն օր իրեք դոնում էտ մռալեն լըղըցնում ա, ինքն էլ մնում էտ տանը։ Տոռնը պանվում չի՞։

Վար կյամ ա մնում, մին տարե, տոռնը պանվում ա։ Էս ախճիգը տուս ա կյամ բալկոնը, տես ու տեն եշում, մինակ ինքն ա ինում, էլ օրիշ մարթ չի ինում։

Շատ վար կենում ա, տուս ա կյամ, տեսնում մին զարաչու դաստա յա քյինամ։ Ընդրանց ծեն ա տամ, պիրում ուրան կոշտը, տրեսնում մին ախճիգ ըտրանց նըհետ, ասում ա.— Հի՞նչ տամ, վար էս ախճիգը թողեք իմ քշտես։ Մին լագյան վրեսկե կտամ, թաքյի թողիք կենա։ Էս զարաչիքը ռազի յըն կենըմ։

Էտ ախճիգը թողնում ըն ըտրա քշտեն, ուրանք քյինում։ Էս զարաչի ախճիգը քյնամ ա ճուր պիրում, տոնը սրփում, ամմեն հինչ անում, ամմա էն մեծ ախճիգը էտ մարթին ամեն օր լըղըցնում ա, համ էլ քընենքյ ա անըմ, թա. «Էտ մրեռալը սղննական ա՞, թա չէ»։ Էս էրկու ըխճրկերքյը ապրում ըն ըտեղ։ Հաց օտելիս էս զարաչի ախճիգը էն մին ըխճրկանը քշտեն հաց չի օտում, կենում ա, վար էն ախճիգը տուս ա կյամ, ընդրանա ետն ա հաց օտում։

Էս ախճիգը ասում ա. «Մին տրեսնամ էս խե՞ իմ քշտեն հաց չի օտում»։ Մին օր տռանը քմական եշում ա, տեսնում, տա կյամ ա ատոլան հաց յոր օնըմ, տանըմ տինըմ օթախեն քյունշերրմը, ետավ սրերտը թրկելավ կյամ էտ քյունշերը, ասըմ. «Ա՛ քյունշ, մին պատառ հաց տո իլի՞, ախկադ ընք, սոված ընք»։ Ետավ էն մին անգյունը քյինըմ, էլհա իտի ղաչանք անըմ, էն քյունշումը տիրած հացը յոր օնըմ, օտըմ։

Ըստրանք շատ վար կենում ըն, էտ մռալին լըղըցնում, վար մնամ ա օխտը օր, էտ մրեռալը սկսում ա պրպտալը։

Էտ հայրին ախճիգյը սկսում ա հմանչիլը, ու̈րա̈ն մըթկըմը ասըմ ա. «էս տըղան վար եր կենա, պա համո՞թ չի, հի՞նչ կասեն»։

Վերչը կյամ ա մնում մին օր, էտ մարթին լըղըցնում ա, շո̈րերը պիրում տնո̈ւմ քշտեն, էս հայրին ախճիգյը հըմընչելան ընցնում ա էն մին օթախը, ամմա ղարաչի ախճիգյը մնամ ա քշտեն վըեննը կացած։ Էտ մըեռալը աշկերը պա̈նում ա, տեսնում էտ ղարաչի ախճիգյը քշտեն վեննը կացած։

Էս մըեռալը ու̈րա̈ն մըթկըմը ասում ա. «Կա, թա̈ չիկա, ստա յա ինձ լըղըցնողը»։ Եր ա կենում, շո̈րերը կյենում, էս ղարաչի ախճիգյը ու̈րա̈ն հետե օղում։

Ամմա վեր էն մին ախճիգյըն էլ ա տո̈ւս կյամ, ընգրան էլ ասում ա.— Քըյեզ էլ յոր կօնիմ հունցու ծառա։

Էտ մին ախճիգյն ասըմ ա.— Պա յըես ըմ օխտը տարե քյըեզ սլահալ, քյըեզ ամմեն օր լըղըցրալ, էս ա մին տարե յա, վար տա էլ պիրալ ըմ կոշտս ինձ քյո̈մա̈գյ ինիլի հետե, խե՞ տի յըս անում։

Էս մարթը հվատում չի։

Էս ախճիգյը ասըմ ա.— Նա ղարաչի յա։

Էտ մարթը էլհա չի հվատում։

— Դե վար հվատումը չըս, մին տրան փորցի, տես գո̈ւզ ըմ ասը՞մ, թա̈ չէ։

Էս ղարաչի ախճիգյը էլհա տահանց քշտեն հաց չի օտում, կենում ա, վար տահանք տո̈ւս ըն կյամ, քմկներեն հաց ա օտում։ Մին օր էս մարթը օղում ա էտ ըխճըկանը փորցի, տըեսնա, խե՞ ո̈ւրա̈նց քշտեն հաց չի օտում։ Տռանը քշտեն վըեննը կացած տըեսնում ա էս ախճիգյը կյամ ա ստոլան հացը յոր ա օնում, տանըմ, տինըմ օթախեն քյո̈նջերըմը, ետավ տո̈շը թըկելավ ասըմ ա. — Ա՛ քյո̈նչ, մին թիքյա հաց տո, սոված մըեռե։— Ետավ հացը յոր օնըմ, տնո̈ւմ պըա̈նո̈ւմը, սըերտը թկելավ քյնամ տանը էն անգյո̈ւնը, կյամ, մընգյ էլ յոր օնում, մընգյ էլ քյնում։

Էս մարթը տըեսնում ա, վար տհենց ա, նի յա մննում ասում. — էլ քյըեզ օղում չում։

Էս ղարաչի ըխճըկանը շինում ըն ո̈ւրա̈նց ծառան, ամմա էն մին ըխճըկանը յոր ա օնում հունցու կնեգյ։

Շատ ա անց կենում, թա̈ խրեգյ ախճիգյը ասում ա.— Քյնալու յըմ իմ հա̈րա̈նց տոն։

Էս մարթր ռազի յա կենըմ։ Եր ըն կենում տեսա, տենա շինում, յոր օնում, քյնա̈մ հարանց տոն։ Տըեսնում հա̈րա̈նց տոն ըշտըղա՞ յա, վըրգեզ իլա̈լ ա, ընդեղ չի՞։ Մին քանի մարթա հրցնում ըն, ասում

ըն, վեր հաՀրը մեռալ ա, մարը էն ա փլան տեղը։ Տանում ըն մորը տոնը նշանց տամ։ Ախճիգյը նի յա մննում։

Սուվթա՜ մարը ճնանչում չի ըխճրկանը, ետնան, որ ասում ա՝ յրես քու ախճիգյրդ ըմ, մորը օշը տանըմ ա, ընգնում տափը։ Ըտրանք զոռավ ետ ըն պերում։ Սկսում են նոր քյըեփ անելը։ Պիրում ըն ուրանց լոխ պարիկամներին կանչում, նորու հրրսանեքյ անում։ Էտ ախճիգյը միչև ուրան գյանքին վերչը ապրում ա շատ լավ, օքնում ա ուրան մորը։ Իտի էլ ամրախտ ախճիգյը բախտավերվում ա, օրախ, հարուստ ապրում։